ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

-103-
25.03.2020 թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
Պ-Ն՝Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան
Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Գոգարան համայնքի ղեկավարի թիվ 21-Ա որոշումը:

Առդիր՝ 3 էջ :

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԳԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 մարտի 2020թ. թիվ 21-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՎԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՄԱՆ, ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՇՏԱԲ» ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ կետերով, 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «ե», «զ» և «է» կետերով և հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի 18.03.2020 թվականի թիվ 01/107.4/02528-2020 գրությունը՝

Ո ր ո շ ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր հիվանդության «Հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ առաջացնելու ներուժ ունեցող» դեպքի արձագանքմամբ պայմանավորված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գոգարան համայնքում բնակչության պաշտպանության կազմակերպման նպատակով ձևավորել կորոնավիրուսի վարակի տարածման, կանխարգելման և արձագանքման համայնքային շտաբ (այսուհետ՝ շտաբ):

2. Հաստատել շտաբի կազմը՝ համաձայն հավելված 1-ի:

3. Շտաբին՝

առաջնորդվել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գոգարան համայնքի շտաբի գործողությունների և իրականացվելիք միջոցառումների» պլան-ժամանակացույցով՝ համաձայն հավելված 2-ի:

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԳԱԼՈՅԱՆ**

Հավելված 1.
ՀՀ Լոռու մարզի Գոգարան
համայնքի ղեկավարի 2020թ.
մարտի 24-ի թիվ 21-Ա որոշման

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՏԱԲԻ

Ա. Գալոյան - շտաբի պետ, համայնքի ղեկավար
Ս. Պողոսյան - շտաբի պետի տեղակալ, համայնքի ղեկավարի տեղակալ
Շտաբի անդամներ.
Գ. Ղազարյան - առաջատար մասնագետ-հաշվապահ
Վ. Հալաջյան - առաջատար մասնագետ
Զ. Սուքիասյան - բուժքույր
Ե. Հալաջյան - ավագանի
Է. Գասպարյան -ավագանի
Հ.Նիկողոսյան - միջնակարգ դպրոցի տնօրեն
Ա. Որդյան - համայնքը սպասարկող ոստիկանության տեսուչ

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԱԼՈՅԱՆ

Հավելված 2.
ՀՀ Լոռու մարզպետի
2020թ. մարտի 24-ի
թիվ 21-Ա որոշման

ՊԼԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՏԱԲԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Հ/Հ	Միջոցառում	Ժամ	Գործողություններ
1	2	3	4
Կենսաբանական բնույթի արտակարգ իրավիճակների դեպքում			
1.	Դեպքի մասին տեղեկատվության հայտնում	Ժ+20ր	Դեպքի մասին տեղեկատվության տրամադրում՝ - համայնքային օպերատիվ շտաբ, - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոն (9-11, 0322- 2 -35 -31, 091-32-31-12) - շահագրգիռ մարզային այլ մարմիններին:
2.	Ուժերի պատրաստականության բերում	Ժ+ 1Ժ 30ր	համայնքի շտաբի անդամների կողմից անձնակազմի ազդարարում, հավաք:
3.	համայնքի տարածքի կենսաբանան իրավիճակի մոնիթորինգ		Կենսաբանական իրավիճակի մոնիթորինգի տվյալների ստացում և փոխանցում շահագրգիռ մարմիններին:
4.	Տեղանքի հատուկ մշակում		Մասնակցություն տեղանքի հատուկ մշակման լիակատարության որոշմանը:

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԱԼՈՅԱՆ